



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ Կ Ա Ր Գ Ա Դ Ի Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

02 ապրիլի 2013 թվականի N 21-Ա

ք. Հրազդան

Ե. ՄԵՍՐՈՊՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 111-րդ հոդվածի 2-րդ մասի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 2-րդ կետի 1-ին ենթակետը՝ **կարգադրում եմ.**

1. *Երազիկ Մեսրոպյանին* 2013 թվականի ապրիլի 2-ից ազատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Նոր Երզնկայի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության գործադիր տնօրենի պաշտոնից՝ լուծելով նրա հետ 2008 թվականի ապրիլի 1-ին կնքված N 68 աշխատանքային պայմանագիրը:

Հիմք՝ 2013 թվականի մարտի 22-ի N 01/21/1123-13 գրավոր ծանուցումը:

2. Մինչև ընտրության արդյունքում նոր գործադիր տնօրենի նշանակվելը՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Նոր Երզնկայի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության գործադիր տնօրենի պաշտոնակատար նշանակել *Երազիկ Մեսրոպյանին*:

3. Առաջարկել դպրոցի կառավարման խորհրդին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպել և անցկացնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Նոր Երզնկայի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության գործադիր տնօրենի ընտրություն:

4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:



Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ